դիետա-անկյուններին, կատարվում է կցումներ ամեն
մի հյուծված և ուժեղ սնունդի պահանջ դադարող հի-
վանդի. վերջին հաշիվով դարձնելով դիետա-ճաշարա-
ները ուժեղ սնունդի անկյուններ:

Յեթե Տեքստիլում ունենք հիվանդութիւնների ու
մասնավորապես ստամոքսա-աղիքային հիվանդու-
թիւնների իջեցում, ապա ուրեմն այն բոլոր կուլտուր
կենցաղային ձեռնարկումների հետ միասին նաև քիչ
դեր չի խաղացել (յեթե վոչ գլխավորը) տեքստիլի
միասնական դիսպանսերն ու սոցալվճարման կայանը:

ԿԱՆԱՑԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՌՈՐՏԸ ԱՐ- ՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Տես աղյուսակ № 11—12—36 և 37-րդ եջերում:

Կանացի հիվանդութիւնները և արորտը արտա-
դրութեան մեջ զգալի տեղ են գրավում, իրենց տված
աշխատանքի պարպուրդային որերի տեսակետից:

Ըստ տարիների տեղի ունի այդ հիվանդութիւն-
ների ցուցանիշների աճում:

ԱՌՈՐՏԻ ՄԻ ԴԵՊԲԻ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ


Տես աղյուսակ № 13—38-րդ եջում:

Այստեղ նույնպես ուշադրութեան արժանի յի այն
յերեմիւլթը, վոր արորտի մի դեպքի միջին տեվողու-
թիւնը 1932 թվին մոտենում է նորմալին, հակառակ
այն տվյալների, վորը տալիս է 1931 թիվը որինակ
Կոնսերվի, Մետաքսի գործարանները արորտի մի դեպ-
քի միջին տեվողութիւնը 1931 թվին տվել է 24,0—25,0

№ 11 (այ)


ԿԱՆԱՑԻ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

շիվանդութիւնների թիւը 100 սրահադրամների դասով)




ԱՐԴՈՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՁ (ԴԻՎԻԴԱՅՈՒՄՆԵՐԻ ՈՐԵՐԸ 100 ԱՊՐՈՎԱԳՐՎԱԾԻ)

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՁԱՆՆԵՐ
■ 1931.
■ 1939.



ԱՐԱՐՏԻ ԱՐ ՊԵՇԵՐԻ ԱՐԴԱՐՈՒՄԻ ՊԱՅԿԱՆ ԿՈՇԵՐԻ ԿՈՒՆԿԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ



1931

1932

որ. այս յերեվութը բացատրվում է նրանով, վոր այդ արժույթները կատարվել են ստանիտարական աննպաստ պայմաններում, և ուղեկցվել են բարդություններով: Արժույթի մի դեպքի միջին տեվողության իջեցումը 1932 թվին մասամբ հետեւյանք է նրան, վոր Լենինականում և Յերեւանում Կարմիր Պաշտի կողմից բացված է յեղել արժույթիումներ: Մինչև այդ, առողջապահական մարմինների գծով դոյություն ունեցող մանկաբարձական բաժանմունքների մահճակալների թիվը անբավարար էր և արժույթի համար շատ քչերին էր հաջողվում ընդունվել հիվանդանոց և այն ել այն դեպքում, յերբ կինը արհեստական կերպով արյունահոսություն եր առաջ բերում: Պարզ է, վոր նման դեպքերը շատ հաճախ տալիս են բարդություններ ու յերկարացնում հիվանդությունը:

Արժույթը և կանացի հիվանդությունները իրար հետ սերտ կապված են և կանացի հիվանդությունների մեծ մասը արժույթի հետեւյանք են: Այդ տեսակետից առողջապահական, մասնավորապես մայրամանկության պահպանության մարմինները խոշոր անելիքներ ունեն, կանխելու, գոնե նվազեցնելու այդ հիվանդությունները:

№ 12 աղյուսակի թվերը ցույց են տալիս, վոր մայր մանկության պահպանության մարմինների կողմից ՀԱՄ.Կ(բ)Կ. Կենտկոմի 1929 թվի դեկտեմբերի 18-ի վորոշումը մոտեցնել բուժ. ոգնությունը անմիջապես արտադրության, լրիվ չե կենսագործվել անհրաժեշտ և գործարաններին կից կազմակերպել կանացի կոնսուլտացիաներ, կամ կոնսուլացիոն կետեր, վորոնք առկայանների հետ միասին պետք է տանեն աշխատանք ուսումնասիրելու բանվորուհու աշխատանքի ու կենդանի պայմանները, վերցնել դիտպանսերիզացիայի կանացի հիվանդություններով ավելի վտանգված ցիխերը, լայն ծավալել պրոպագանդան արժույթի վնասակարության մասին և սովորեցնել բանվորուհուն հակաբեղմնավորման միջոցների գործադրմանը. վերջինս

կյերկարացնի ծննդաբերությունների միջոցների ին-
տերմարը և այդպիսով կհանդիսանա ուժեղ դործոն
բանվորուհու որդանիղմի առողջացման և նրա արտա-
դրողականության բարձրացման համար: Հարկավոր և
մորիլիզացիայի յենթարկել այն բոլոր հոկայական
ֆինանսական միջոցները, վորոնք հասկացնում են
մայրամհկության պահպանության դործին և սղտա-
դործել այդ դումարները իր անմիջական նպատակին-
կոնսուլտացիաների, մասըների, արորաարելումների,
մանկաբարձական կայանների ցանցի լայնացման,
նրանց աշխատանքի վորտիլի բարձրացման և կադրերի
սղտաբաւուման ու վերապաւրտուման վրա:

Նաև մի քանի բացատրություն պետք և տալ մա-
լարիա հիվանդության տարածման մասին: Ինչպես յե-
րեմում և վերեմում բերված թվական տվյալներից,
մալարիայի տեսակարար կշիռը ընդհանուր հիվանդու-
թյունների մեջ խոշոր տեղ և բռնում և վերջին տարի-
ներում աճ և աւելիս:


1933 թվի մալարիայի տեսակարար կշիռը բոլոր
մնացած հիվանդությունների մեջ հավասար և 26,7
տոկոսի. 1931 թ. 5,87 տոկոսի դիմաց:

Տես. աղյուսակ № 14—41-րդ եջում:

Մալարիայի այդպիսի բռնկումը վերջին տարիներ-
ում պետք և բացատրել մալարիայի վիրուսի ուժե-
ղացմամբ, վորը հետեւանք և այն հանգամանքի, վոր
չնորհիվ վերջին տարիներում մեր արտադրության ու
չինարարության մեջ հանրապետության լեռնային
շրջաններից, բանուժի լայն ներգրավման, նպաստավոր
սղյամաններ և ստեղծել մալարիայի վիրուսի ուժե-
ղացման համար, այն ե—մալարիայի վիրուսը, անց-
նելով առողջ որդանիղմի մեջ, մի կողմից վարակելով
նրանց ավելացնում և այդ հիվանդության դեպքերը,
իսկ մյուս կողմից ուժեղացնելով իրա վիրուլենտու-
թյունը (թուլնի ազդման ուժը) հիվանդությանը տա-
լիս և համաճարական բնույթ և ծանր ընթացք: Այս-
տեղից ի հարկե չի կարելի յեզրակացնել, թե Վեռնային

№ 13

ՄԱՆՅԱՐԻԱ (ԴԻԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՈՐԵՐԻ ԹԻՎԸ 100 ԱՊՐԱՐԱԳՐԱՄԻՐ)



չըմանները պետք է խնայատրտելովին, աշխույժ պահուժի հասանքը դեպի դաշտավայրերը ու արտադրական կենտրոնները պետք է զագագրեցնել, մաշարիայի վարակը նրանց մեջ չտարածելու պատճառարանով թյամբ: Ընդհանրապես, բանուժի հավաքողըման հետ զուգընթաց, ամբողջ հակամարտիային պայքարը պետք է ուղղել դաշտային շրջանները, նպատակ ունենալով վերացնելու ոչ ոք խոչարդույն չարիքը մեր աշխատավորության միջից:

Պրոխտարական պետությունը հակայական դամարներ և ներդնում հակամարտիային պայքարը կողմակերպելու համար. Ժողկոմխորհին կից գոյություն ունի հատուկ հակամարտիային կամխան, վարը զնկավարում և այդ աշխատանքները: Միայն Սոցապահովողբան մարմինների կողմից 1933 թվին բաց և թողնված ոչ ոք աշխատանքների համար 672000 ուրբի:

Մաշարիայով վարակված շրջաններում գոյություն ունի Տբույ կայանների, տրույ գիսպանսերների և պրոֆիլակտիկ կետերի բավարար ցանց, նույն տեղերում խոշոր խորհրդային տնտեսություններին, ՄՏԿ-ներին կից գոյություն ունի բոնիֆիկատորների բավականաչափ կադրեր: Խինինով միանգամայն այդ վայրերը ապահովված են. մյուս կողմից տարվում և ծավալուն աշխատանք հաճիճների նեմլթեվորման ու փարիդյան փոշով այնրոփուշավորման: Սակայն պետք և ասել, վոր աշխատանքի վորակական ցուցանիշները վորոշ տեղերում անբավարար են. բժշկական ու ջուրական կադրերը իրենց բարձրության վրա չեն գտնվում, նրանց վորակը բավականին ցածր և, աշխատանքները չեն զլխավորում, կանխարկիչ միջոցառումներ, կամ լրիվ չափով չեն անցկացնում կամ մեծ ուշացումներով են սկսում աշխատանքը, որինակ՝ Յ-րդ Խորհրդային տնտեսությունում բոնիֆիկատորական աշխատանքները և պրոֆիլակտիկ խինիդացիան սկսել են միայն ոգոստոսի վերջին, Էնայած, վոր տեղում տ-

սահմանափակ են յեղել բժշկական և թե բոնիֆիկատորական կադրերով ու պրոֆիլակտիկ կետով: Վերոշ չափով վերահիշյալ հանգամանքը նույնպես ազդում է մալարիայի ցուցանիշների բարձրացման վրա:

Մալարիայի դեմ ուղղված պայքարում արմատական նշանակություն ունեն հիդրոտեխնիկ աշխատանքը (ճահիճների չորացումը, դրենաժավորումը): Այստեղ պետք է ասել, վեր մեր Տրոպ կայանները հակայական աշխատանքներ են տարել, իրենց սեփական միջոցներով միայն 1933 թվին չորացրել են 25 հեկտար ճահիճներ: Սակայն վերջին խոսքը պատկանում է Հայջրտնտեսությանը, վորպեսզի իր աշխատանքների մեջ խոշոր աեղ տա այնպիսի հիդրոտեխնիկ ձեռնարկումների, վորպեսզի հնարավոր լինի 2-րդ հնգամյակում վերացնել մալարիան:



Տալով հիվանդությունների անալիզը արտադրության մեջ, զուգընթաց դրսևվորվեցին այլ հիվանդությունների բարձր ցուցանիշները. այժմ հարկավոր է ամփոփել և վորոշ դասակարգման (էլասիֆիկացիա) յենթարկել այդ պատճառները:

Հիմնականում արտադրության հիվանդությունների բարձր ցուցանիշների պատճառները բաժանվում են 4 կարգի. —

1. Բանուժի հոսունությունը և ախատանքի կարգապահության խանգարումը:

2. Արտադրական սանիտարիայի և անվտանգության տեխնիկայի դրվածքը արտադրության մեջ:

3. Բուժպրոֆիլակտիկ գործի դրվածքն արտադրության մեջ և բուժհսկողությունը:

4. Սոցիենցադային դրությունը:

Հարկավոր է հիվանդությունների բարձր ցուցանիշների այս չորս հիմնական գործոնները յենթարկել առանձին ըննության և հանել կոնկրետ յեղրակացություններ, հետադայում ել ավելի իջեցման նույնիսկ մո-

որչ Հիվանդություններ՝ սուր վարակիչ Հիվանդությունները, Թոքախտը, մալարիան և տրալման. կարճ ժամանակամիջոցում խաղառ վերացնելու համար:

1. Բանուժի հոսունության վերացումը և աշխատանքի կարգապահության բարձրացումը, անկասկած Հիվանդությունների ու արտադրական տրալմայի իջեցման տեսակետից խոշորագույն նշանակություն ունի:

Այս խնդրում մեծ դեր և խաղում կադրերի մշակույն, բարձրորակ լինելը, տվյալ գործարանի տեխնիկային լիովին տիրապետելը, մեքենայի դիմադրկության վերացումը: Հոսուն կադրերը տեխնիկային տիրապետել անկարող են, հետեյապես նրանց հետ դըժգախտ պատահարներ հաճախակի կլինեն, հոսուն կադրերն ավելի շատ են յենթակա զանազան Հիվանդությունների, քանի վոր նրանց կենցաղը տվյալ գործարանի կլիմայական բնակարանային և այլ պայմաններին հարմարեցված չեն: Մյուս կողմից մեր կուսակցության աշխատավարձային քաղաքականության ճշգրիտ կիրառումը «ձախ» հաշվառեցման վերացումը, աշխատավարձի, գործարքային պրեմյալ սխեմեի կիրառումը, սոցմրքման ու հարվածայնության լայն ծավալումը անշուշտ խոշոր ազդակ են հանդիսանում բանուժի հոսունության վերացմանը, բարձրացնում են աշխատանքի կարգապահությունը, իջեցնում սիմուլյանտների ու ագրավանտների թիվը, վորոնք զանազան դարտուղի ճանապարհներով, վորոշ առատաձեռն բժիշկներից ստանում են վոչ հիմնավորված արձակուրդներ:

Այդպիսով աշխատանքի ուսցիոնալ կազմակերպումը արտադրության մեջ, աշխատանքի սոցիալիստական ձեվերի կիրառումը, սոց մրցման ու հարվածայնության լայն ծավալումն հանդիսանում են հիվանդությունների իջեցման նախադրյալներից մեկը:

2. Արտադրական սանիտարիայի և տեխնիկական անվտանգության դրվածքից, ինչպես հիշված և վերելվում, կախված և հիվանդությունների առանձնապես

գրիպի, տրավմայի պրոֆ. հիվանդություններն իջեցումը: Պետք է խոստովանվել, վոր մեր տնտեսավարները իրենց վրա վերցրած պարտավորությունները կընճված պայմանագրով արտ-սանիտարիայի, անվտանգության տեխնիկայի միջոցառումների վերաբերյալ լրիվ չեն կիրառում, թերադնահատելով այդպիսին: Որ. 1933 թ. կնքված պայմանագրերով տնտեսավարները պարտավորվել են վենտիլացիայի, տեխնիկական անվտանգության և արտսանիտարիայի վրա ծախսել:—

	Արտադրական ոբյեկտներ	Կնքած պայմանագրով	Ցամախ մեծ պլանի դիմաց կատարված է	Ծանոթություն
1	Կաշեգործարան	50,000 »	52 տոկոս	
2	Տեկստիլ	33,000 »	4,0 »	
3	Մեխ գործարան	9000 »	—	
4	Ալյանվերդի պղնձի կոմբ.	156,700 »	15,6 »	
5	Զանգեզուրի կոմբինատ	22,700 »	71,8 »	
6	Անի սեմզա	3,500 »	—	
7	Արթիկ տուֆ	1,600 »	46, »	
8	Արարատ տրեւոտ	60,000 »	0 8 »	
9	Մետաքսի գործարան	4000 »	33.0 »	
10	Տպարան	16,200 »	14,2 »	

Աշխատանքի պաշտպանության պլաններն այսպիսի թերակատարումը 1933 թվին բացատրվում է նախ նրանով, վոր նախատեսված դումարները տնտեսավարները չատ ուշ են բաց թողել, կամ ըտլորովին հրաժարվել են հատկացումներ կատարելուց (մեխանիկական գործարան, Լեն-տեքստիլ, Ալյանվերդի և այլն), ապա անբավարար են կատարում իրենց վրա վերցրած պարտավորությունները այն արտ. ձեռնարկները, վորոնք պետք է ապահովեյին մեր արդյունաբերությունը, անվտանգության տեխնիկայի, վենտիլացիոն և դուշերի սարքավորումներով, բացի այդ աշխ. տեսչության հսկողությունը թույլ է յեղել և անսխտեմ. անբավարար են

յեղել նաև պրոֆիտի յուններէ մասնակցութեանը պայմանադրերի կատարման վրա հսկողութեան սահմանելու գործում. պայմանադրերի կատարման մասնաշաղկան ստուգումը չի կատարված և աշխարհին սխառեմատիկ բնույթ չի կրել:

Պետք է ընդդէմէլ նաև, վոր շատ հաճախ նորակառույց գործարաններէ տեխնիկական նախագծերը նախորոք չեն համաձայնեցվում սանիտարական մարմինների հետ և կառուցվում են արտ. սանիտարիայի ու անվտանգութեան տեխնիկայի տեսակետից գեֆեկայի չենքեր, վորոնք հետո բաժանանին դժվար և լինում ուղղել: Այս բոլոր հանդամանքները բացասական են անդրադառնում աշխատանքի պայմանների առողջացման վրա:

Այսպիսով, երկամիութեան յունների ու տրավմատիզմի իրեցման 2-րդ մայիսադրայը հանդիսանում է արտասնիտարիայի և անվտանգութեան տեխնիկայի լավ դրվածքը և տեխնոլոգիական պրոցեսի ստողջացումը:

3. Ինչպես ցույց է տալիս Հիվանդութեանների առաքիլը, բուժ ուղնութեան գործի զբաժնից հսկայական չափով կախված է Հիվանդութեանների դրութեանը արտադրութեան մեջ. յեթե արտադրութեանը անմիջապէս չի ապահովված վորակյալ և մասնադիտական բուժ ուղնութեամբ, յեթե բանվորը առանց արտադրութեանից կտրվելու չունի հնարավորութեան ստանալու վորակյալ մասնադիտական ռենդեն, Ֆիզիոտերապիատիկ, աչքի, ականջի, կոկորդի, առամի բուժ ուղնութեան տեղում, ապա շատ պարզ է, վոր Ղափանի պղծմահանքերի բանվորին բուժելու համար սոցալամարմինները ստիպված են ուղարկել Բազու կամ Յերեվան (աշխարհի դեպքերը հաճախակի յեն) նման դեպքերում Հիվանդը տալիս է հսկայական պարապուրդ որեր, Հիվանդութեան պատճառով, մինչդեռ միանգամայն հնարավոր է կողմակերպել մասնադիտական բուժ. ուղնութեանը արտադրութեան կից, քանի վոր աշխատակի համար սոցիալական ապահովագրական մարմինները խոշոր գումարներ են հատկացնում:

Պետք է տեսլ, վոր Ղափանի՝ մեր աշխատավոր

արդյունաբերութեան բուժ. ուղնութեան դործը թերևս անբավարար եւ կազմակերպված. հիմնական թերությունը դա մասնադիտական բուժօգնութեան վոչ լրիվ կազմակերպվածութեանն եւ կամպանիական բնույթ կրող կենտրոնից ուղարկվող մասնադիտական բժշկական ուժերի աշխատանքը, չի կարող եֆեկտաւոր լինել. մնալով աշտեղ ամենաշատը մեկ-յերկու ամիս, այդ բժշկական խմբերը բնականաբար անկարող են ընդհուպ մոտենալ արտադրութեան, ուսումնասիրել աշխատանքի պայմանները, ի հայտ բերել հիվանդութեաններով ալելի շատ վտանգված բանվորական խումբերը, ուսումնասիրել նրանց սոց. կենցաղային դրութեանը, նրանց վերցնել դիսպանսերիդացիայի եւ այլն: Նրանց աշխատանքը զուտ բուժական բնույթ եւ ստանում: Անհրաժեշտ եւ ուղարկել Ղափան վորակյալ բժշկական կադրեր՝ մշտական աշխատանք տանելու համար:

Լենտեքստիլի արդյունաբերութեանում հիվանդութեանները համարյա թե մինչ 1932 թիվը տալիս եյին անընդհատ աճ. 1932 թվից հիվանդութեանների զգալի իջեցում եւ տեղի ունեցել. անկասկած, հիվանդութեանների իջեցման այդ պրոցեսում միասնական դիսպանսերը եւ առ-կայանները խոշոր դեր են խաղացել, վորոնք բաժականին դիտահետադոտական եւ դործնական-մասսայական պրոֆիլակտիկ աշխատանք են ծաւալել Տեքստիլի բանվորութեան աշխատանքի ու կենցաղի առողջացման գործում: Նույնը կարելի չեւ ասել Յերեանի արդյունաբերութեան վերաբերյալ— 1932 թվին առաջին անգամ կազմակերպվեցին առ-կայաններ. թվով 12-արտադրութեաններին կից. այսոր նրանց թիվը հասնում ե 25-27-ի: Չիշտ եւ, նրանցից գեւ եւ մի մասը ընդհուպ չի մոտեցել արտադրութեան պահանջներին, չի ծաւալել մասսայական պրոֆիլակտիկ աշխատանք, չեւեւս Առ-կայանների կադրերը իրանց վորակով հետ են մնում մեր այս որվա պահանջներից այնուամենայնիվ նրանց գոյութեանը արտադրութեան մեջ, նրանց տարած սան-պրոֆիլակտիկ աշխատանքը իր

Եֆեկատուորությունը այսօր տալիս է: Բուժօգնության
գործի խոշորագույն թերություններից մեկն էլ հան-
դիսանում է տնային բուժօգնության թերի կազմակեր-
պումը՝ տնային բուժօգնությունը նախ չի կարողանում
ընդգրկել աշխատատուրության պահանջը լրիվ չափով:
հաճախ բժիշկը հիվանդի մոտ կարողանում է այցելել
պահանջի 2-րդ օրը: Պարզ է, վոր այդ հանդամանքից
չստ սխմույթանտներ ու աղքատատներ ողտվում են,
հայտնելով բժշկին, վոր իրը հիվանդ են յեղել նախ-
ընթաց օրը, բժիշկը սախարթած է լինում ձեվակերպել
անցած օրերի իր կողմից չհաստատութած հիվանդու-
թյան վերաբերյալ արձակուրդ: 2-րդ. տնային բուժօգ-
նությունը չի սալահոլթած վորակյալ է մասնադիտա-
կան բժշկական կադրերով: Չնայած հիվանդանոցային
ցանցի է նրա մահճակալների հսկայական աճին, այնու-
ամենայնիվ դեռ հնարավոր չէ հարյուր տոկոսով բոլոր
հիվանդներին ընդգրկել հիվանդանոցներում: Հետեվա-
պես, տնային բուժօգնությունը դեռ առողջապահական
սխտեմի կարելվորագույն ողակներից մեկն է հանդի-
սանում, ուստի անհրաժեշտ է աշխատատուրությանը ա-
պահոլել տնային պայմաններում վորակյալ, մասնա-
դիտական վիրարութական, մանկական, ականջի, կո-
կորդի, կանացի հիվանդությունների, ծննդաբերական
է այլ տեսակի բուժ օղնությամբ: Հիվանդությունների
իջեցման գործում խոշորագույն նշանակություն ունի
սոցապահոլադրության գծով կազմակերպված բուժ
հսկողությունը:

Մոցիալական ապահոլադրության գծով խոշոր գու-
մարներ են հատկացվում առողջապահական մարմիններ-
ին, ապահոլադրվածների դերագանդապես առաջավոր
արդյունաբերական ճյուղերի բանվորության բուժ.
պրոֆիլակտիկ սպասարկման գրվածքի լայնացման է
վորակի բարձրացման համար, հետեվապես նրանց կող-
մից անհրաժեշտ է ուժեղ բժշկական հսկողություն սահ-
մանել—ժամանակին գրսելվորելու բուժ. պրոֆիլակտիկ
գործի թերությունները է հատկացված գումարները

ուղղել բանվորական արտադրական վայրերը, առաջին հերթին՝ առաջավոր արդյունաբերութեան ճյուղերի բանվորութեան բուժ սպասարկման գործն բարձր աստիճանի վրա, դնելու, նրանց համար փակ սիստեմի գիսպանսերներ, մասնադիտական բոլոր բաժանմունքներով, հիվանդանոցներ, մսուրներ, կոնսուլտացիա և այլն կազմակերպելու համար: Ընդհանրապես հսկիչ բժիշկը պետք և հիվանդութեւոյնների վիճակադրական տվյալները, ոգտադործի մաքսիմալ չափով, մշտական հսկողութեւոյն սահմանի առանձին արտադրական ճյուղերի հիվանդութեան և տրամվայի գինամիկայի վրա, մորպեսզի ժամանակին կարողանա բեմեռել բանվորական մասսայի, նրա ակտիւի ուշադրութեւոյնը և բժշկական միտքը դեպի բարձր ցուցանիշներ տվող հիվանդութեւոյնները, նրանց դեմ ժամանակին պայքար սկսելուն, սանատորիա-կուրորտային ուղեգիրները արդյունաբերական ճյուղերի միջև ճիշտ բախշելու համար: Մյուս կողմից դեռ խիստ կարիք և ղգացվում սահմանելու բուժ. հսկողութեւոյն, հիվանդ բանվորի ու բուժող բժիշկների վրա, քանի վոր բուժող բժիշկներից մի մասը հանդիսանում և դեռ ևս սոսկ բուժող բժիշկներ, արտադրական մոտեցում նրանց կողմից դեպի հիվանդները բացակայում և և շատ հաճախ եօան հեղինակութեւոյն ձեռք բերելու նկատառումներով չեն ցույց տալիս դիմադրութեւոյն աշխատավորութեան վորոշ խավերի գումողական տրամադրութեւոյններին և նրանց չաբամիտ պրողութեւոյնը հիվանդութեան թերթիկների միջոցով լեգալիզացիայի յենթարկում: Այստեղ բուժ. հսկողութեան դերը շատ մեծ և—կազմակերպել պայքարը սիմուլիացիայի, ադրամլացիայի դեմ, ստեղծել այդ հարցի շուրջը հասարակական կարծիք: Պետք և ասել, վոր յեթե բանվորական վայրերի բուժ. ողնութեան գործը այսոր ունի խոշոր թերութեւոյններ, պայքարը սիմուլիացիայի և ադրամլացիայի դեմ չի ծավալված, ապա մեղքի մի մասը ընկնում և սոցիալական ապահովագրութեան մարմինների վրա, վոր բուժ. հսկողութեւոյնը չեն կարողացել բարձր աստիճանի վրա դնել, ա-

առողջապահական մարմինների հետ միասին իլիճակի չեն յեղել աշխատանքները խորացնելու, բանվորական հասարակայնությունը ներդրալելու հիմանդությունների իջեցման պայքարի մեջ և այդ պայքարը դարձնելու տեղական, իրենց աշխատանքների տաանցքը:

Ամփոփելով վերոհիշյալը, պետք է արձանագրել, վոր հիվանդությունների ու տրավմատիզմի իջեցման 3-րդ նախապայմանը հանդիսանում է բուժ. պրոֆիլակտիկ գործի մոտեցումը արտադրության, նրա սպասարկումն վորակյալ մասնագիտական բուժ. ոգնությամբ, առանց բանվորին արտադրությունից կտրելու:

4. Սոցիենցադային ձեռնարկումները, ինչպիսիք են՝ մտաւերները, մանկապարտեղները, դպրոցական տաք նախաճաշի կազմակերպումը, բնակարանային շինարարությունը, ճաշարանների կազմակերպումը, հասարակական սննդի ու նրա վորակի բարձրացումը, հանրակացարանների, առանձին բնակարանների սանիտաւահան դրության բարելալումը, հանդոտյան տները, կուրորանների լայն ծաւալումը—այս բոլորը ալնքան սերաշաղկապւած են աշխատանքի ու կենցաղի առողջացման խնդրների հետ, վոր հանդիսանում են մի գորեղ գործոն՝ հիվանդությունների իջեցման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման համար: Պրոկտաւարական պետությունը, տնտեսական հասարակական ու պրոֆմիութենական կազմակերպությունները հսկայական դումարներ են հատկացնում տարեց—տարի այդ նպատակի համար:

Սակայն պետք է ընդգծել, վոր շատ հաճախ այդ դումարները լրիվ չեն ոգտադործւում, կամ անմիջական նպատակին չեն ծախսւում: Մյուս կողմից սոց. կենցաղային հիմնարկների քանակական ու վորակական ցուցանիշները շատ ցածր են, նրանք ի վիճակի չեն արտադրության աճող պահանջը լրիվ ընդգրկելու. դեշերային սանատորիաները արտադրության կից, վոր մենք ունենք միայն Լենտեքստիլում, խոշոր դեր ունեն կատարելու աշխատանքի ու կենցաղի առողջացման գործում. հաղարավոր բանվորներ չկտրվելով արտադրու-

Թյունից, կարող են ստանալ այնտեղ կազմակերպված հանդիսատե և սան բուժում. վորձը ցույց ե տալիս, վոր հիվանդ բանվորը բուժվելով գիշերային սանատորիայում 1-2 ամիս, աշխատանքի պրոցեսում պարսպուրդ չի տալիս, անհրաժեշտ ե առաջին հերթին գիշերային սանատորիաներ կազմակերպել Ղափանի ու Ալազվերդու պղնձա-արդյունաբերության բանվորների համար, վորոնք համեմատած մյուս արտադրական ճյուղերի հետ տալիս են թուջատի բարձր ցուցանիշներ:

Այդպիսով, հիվանդությունների բարձր ցուցանիշների իջեցման 4-րդ նախապայմանը հանդիսանում ե բանվորների կուլտուր-կենցաղային պայմանների ելավելի բարելավումն ու առողջացումը:



Հիվանդությունների և աշխատունակության ժամանակավոր կորուստի ու արտադրության պարսպուրդի խնդիրներով մեր առողջապահական գիտահետազոտական հիմնարկները քիչ են զբաղվել: Հանրնոցապահանձարկղը հիվանդությունների բարձր ցուցանիշների դեմ պայքարելու նպատակով 1931 թվին կազմակերպեց գիտական խորհուրդ, վորի կազմի մեջ մտնում եյին—Առողջկոմատի և Աշխատողկոմատի գիտահետազոտական ինստիտուտի միջանի գիտական աշխատակիցները: Այդ գիտական խորհրդի նախաձեռնությամբ 1931 և 1932 թ.թ. Հանրնոցապահանձարկղը հայտարարեց շտուրմային միամսյակներ հիվանդությունների ուսումնասիրության և պայքարի մեթոդների մշակման համար:

Այդ շտուրմային միամսյակի ժամանակ տարված ե բրիգադային հետազոտություն Յերեվանի-Մեխանիկական, Կարի, Կաշվի, Մետաքսի դործարաններում. Լենինականում-Տեքստիլի կոմբինատում:

Բրիգադների նպատակն եր տեղում արտադրության մեջ պարզել, թե վոր ցեխում ինչ հիվանդություն բարձր ցուցանիշներ ե տալիս, դրսևվորել նրանց պատճառները

և ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ աղյուսիները
 վերացնելու համար: Բրիգադների կազմի մեջ մտնում
 էլին տեղի սոցապրոֆիչկը, տոկայանի բժիշկը, տեխ-
 նիկական տեսուչը, Սոցապրոֆաբման կայանի վարիչը
 (վորտեղ աղյուսին կար), աօրաժնի սան բժիշկը: Բրի-
 գադային հետադրաման աշխատանքները, համաձայն
 իր կազմին, կոմպլեքսային բնույթ էր կրում: Միամ-
 սյակի ընթացքում բրիգադները վերցրել էլին գիտական-
 սերիզացիայի բանվորական այն խմբակները (Տեքս-
 տիլ), վորոնք տվելի շատ փառնդված են հիվանդու-
 թյուններով, ուսումնասիրվել են աղյուսիների կենցա-
 դային պայմանները: Կաշվի գործարանում ամբողջ
 բանվորութունը յենթաբերվել է բժշկական քննության,
 տարվել է գործարանի, ցեխերի, սանիտարական,
 տեխնիկական դրության հետադրաման, նամանավանդ
 այն ցեխերի, վորոնք վորոշ հիվանդությունների բարձր
 ցուցանիշներ են տալիս: Ուսումնասիրվել էր նաև ռեվ-
 մատիկ հիվանդությունները Կաշեգործարանի մեջ:
 Նույնիսկ այդ գործարանում բրիգադան մասնակցել էր
 գործարանի շրջապատի ճահիճների չորացման աշխա-
 տանքներին: Մետաքսի գործարանում կատարվել է
 պրոֆ. հիվանդությունների, այն է՝ մասների, ձեռ-
 ների մաշկի բորբոքման խոր ուսումնասիրություն
 Սանհիգիենիկ ինստիտուտի մասնակցությամբ, առա-
 ջարկված էր գործադրելու վորոշ սպեցիանի և փորձական
 բուժում: Նույն ժամանակամիջոցում ուժեղացված էր
 այդ գործարաններում բանվորական հսկողությունը
 (կոնտրոլ) հիվանդությունների վրա: Բրիգադների ա-
 ռաջարկները դրվել էր քննության գործարկոմի և բան-
 վորական լայն ախտիվի նիտեբրում: Այդ աշխատանք-
 ների եֆեկտափորությունը յեղավ այն, վոր Կարի, Կաշ-
 վի, Մետաքսի գործարանները մինչ այդ տվել էլին հի-
 վանդությունների բարձր ցուցանիշներ, նամանավանդ
 ամառվա ամիսներին, իսկ շաուբմի միամսյակի (ոգոս-
 տոս ամսին) ընթացքում տվին հիվանդությունների ի-
 ջեցում:

Ինչո՞ւմ էր կայանում բրիգադանների աշխատանք-

ներքի եֆեկտալորության պատճառը. նրանում, վոր
 բրիգադաները նախ կոնկրետ միջոցառումներ ելին
 մշակել և ձեռնարկել գործարանում ու Սոց. կենցաղա-
 յին հիմնարկություններում՝ հայտնաբերված թերու-
 թյունները տեղն ու տեղը վերացնելու, ապա այդ աշ-
 խատանքներին ներգրավել ելին բանվորական ակտիվը:
 Այս բոլորից միանգամայն պարզ և, թե վորքան մեծ
 նշանակություն ունի հիմնադրությունների պատճառ-
 ների լուրջ մասսայական ուսումնասիրությունը և
 դրանց վերացման համար ձեռնարկվելիք միջոցառում-
 ները: Իհարկե, այս բոլոր աշխատանքները հնարավոր
 ե տանել բանվորական հասարակայնության լայն ներ-
 գրվմամբ: Այս աշխատանքները անշուշտ պետք է
 դիտարկեն Առօրյակոմատի և ՀԱՄԽ-ի գիտահետազո-
 տական հիմնարկները. առանց նրանց մեթոդական գի-
 տական ցուցմունքների, հիմնադրությունների իջեցման
 համար արտադրության մեջ տարվող պայքարը չի կա-
 րող այնքան ել եֆեկտալոր լինել: Առողջապահական
 մարմինները, պրոֆմիությունները, Հայաստանի Կար-
 միր խաչը, բանվորական հասարակայնությունն իրենց
 աշխատանքների մեջ ներգրավելու համար տեղերում
 ունեն կազմակերպված բժիշներ, սան պոստեր, առ-
 բժիշներ, սոցապալատգամավորներ, սակայն շատ հա-
 ճախ ընտրված այդ բժիշները մատնվում են մոռացու-
 թյան, նրանց աշխատանքները չեն դիտարկում վոչ
 գործարկումը, վոչ ել Առ-կայանը. հարկավոր ե այդ
 բժիշներին վորպես կազմակերպչական ձեւ, տալ հա-
 մապատասխան լիծք, դարձնել նրանց աշխատանքները
 բովանդակալից: Գործարանը այսօր ապահովված ե
 վերոհիշյալ կազմակերպությունների ներկայացուցիչ-
 ներով՝ գործարկում, Առ-կայան, «Կարմիր Խաչի»
 բժիշ, նրանց վրա հսկայական պատասխանատվություն
 ե դրվում, լայնորեն ներգրավել բանվորական ակտի-
 վին, հասարակական կազմակերպությունների բժիշնե-
 րի մեջ (առ-բժիշներ, սանպոստեր, սոցապալատգամա-
 վորներ)

Առանձնապես պետք ե շեշտել գործարկումների խո-

չորագույն դերի մասին: Աշխատանքի ու սոցալաւո-
 վադերական մարմինների միացումից հետո, գործար-
 կումները տեղում հանդիսանում են միեւնոյն ժամանակ
 սոցալովճարման կայաններ: Սոցիալական ապահովա-
 դրութեան հսկայական դումարները այժմս կուտակ-
 վում են գործարկումների բնթացիկ հաշիվներում և
 նրանց տնորինութեանն և հանձնվել այդ դումարները
 ծախսելու իրավունքը: Յեթե վերցնենք նրանց բյուջեն,
 ապա կտեսնենք, վոր այդ բյուջեյում ժամանակավոր
 անաշխատունակութեան որերի վճարման դումարը
 կազմում և բյուջեյի 18-25 տոկոսը, գործարկումները
 շահագորդված պետք և լինեն իջեցնել հիվանդութեան-
 ները: Համաձայն գոյութեան ունեցող որենքների, հի-
 վանդութեանների իջեցման պատճառով, գոյացած
 խնայողութեան 50 տոկոսը գործարկումը իրավունք ու-
 նի ծախսելու կոլեկտիվի սոցկենցադային ձեռնարկում-
 ների վրա, բյուջեյում նախատեսված դումարներից
 դուրս: Գործարկումները պետք և գլխավորեն հիվան-
 դութեանների իջեցման համար տարվող պայքարը,
 դրանով կտան յերկու տեսակի եֆեկտ. նախ՝ արտա-
 դրութեան համար խնայած կլինեն բանվորական որեր,
 հետեւյապես կաջակցեն աշխատանքի արտադրողակա-
 նութեան բարձրացմանն, արդֆինպլանների կատար-
 մանն, ապա իրենց բյուջեյի գոյացած խնայողութեան
 հաշիվն հնարավորութեան կատանան բարձր աստիճանի
 վրա դնել աշխատանքի ու կենցաղի առողջացման խըն-
 դիրները:

Ինչպես պետք և գործարկումները կազմակերպեն
 պայքարը հիվանդութեանների իջեցման համար: Յեւ-
 նելով Հանրաոցապգանձարկղի գլխական խորհրդի
 փորձից, նախ անհրաժեշտ և գործարկումներին կից ու-
 նենալ մշտական հիվանդութեանների իջեցման հատուկ
 մի շտաբ, վորը գլխավորելու յե այդ պայքարը, տա-
 նելով աշխատանքը կոմպլեքսային սխտեմով: Շտաբի
 մեջ հարկավոր և նախատեսել առ-կայանի բժշկին,
 սոցալբժշկին, սանտեսչին, տեխնիկական տեսչին,
 գործարկումի սոցկենցաղի սեկտորավարին: Նպատա-

կահամար ե, վոր շտաբի նախագահ լինի գործարկումի նախագահը, կամ սոցկենցադի սեկտորավարը. շտաբի անմիջական տրամադրության տակ են գտնվում, առ-բջիջները, սանսոյոսները և սոցապսպատգամավորները:

Առկայանը հիմնադրությունների բարձր ցուցանիշ-ների պատճառների ուսումնասիրության և դիսպանսե-րիզացիայի աշխատանքները տանում ե շտաբի անմի-ջական ղեկավարությամբ, վորի համար նախ կատա-րում ե գործարանի հիմնադրությունների ամենորոյա հաշվառում: Այդ հաշվառումը հաջող տանելու համար անհրաժեշտ ե, վորպեսզի բուժհիմնարկները բուժա-րան, դիսպանսեր, հիմնադանոցները ներկայացնեն ա-մեն որ տեղեկանք առ-կայաններին՝ տվյալ գործարա-նի հիմնադների մասին, ցույց տալով նրանց անունը, ազգանունը, վոր ցեխում ե աշխատում և նրանց դիագ-նոզը: Հարկավոր ե Առժողկոմատի կարգադրությունը բուժ. հիմնարկներին, վորպեսզի նրանք պարտավորվեն ներկայացնելու այդպիսի տեղեկանքներ առկայաննե-րին յուրաքանչյուր որ:

Առկայանի բժիշկը ստանալով այդ տեղեկանքները յենթարկում ե հաշվառման, մշակում ե տվյալները ըստ ցեխերի ու հիմնադրությունների, ապա կատարում ե ցեխերի սանտեխնիկական դրության խորացած ու-սումնասիրություն, սանիտարական և տեխնիկական տեսուչների հետ միասին. հաշվառման ե յենթարկում հաճախակի և յերկարատեւ հիմնադացողներին, և հայտնաբերելով հիմնադրությամբ վտանգված ցեխերը, կամ առանձին բանվորական խմբեր, մասնագետների ու բուժհիմնարկների միջոցով նրանց յենթարկում են դիսպանսերիզացիայի:

Մյուս կողմից, ամեն որ ուղարկում ե բանվ. կոնտ-րոլը հիմնադ բանվորների տները, կենցաղային պայ-մանները ուսումնասիրելու և պարզելու, թե ինչ չա-փով հիմնադը ապահովված ե տնային բուժ. ոգնու-թյամբ, ճշիլրիտ կատարում ե բժշկի տված խորհուրդ-ները, թե վոչ և այլն. յեթե միևնույն ժամանակ բան-կոնտրոլը պարզում ե, վոր պարասպուրդ տվողը չա-

բամառերն ստացել ե բժշկից հիվանդության թերթիկ,
սակայն ինքը հիվանդ չէ, այլ դրադմում ե իր անձնա-
կան դործերով, այդպիսի դեպքում հիվանդության
թերթիկը վերցվում ե սիմուլյանտի ձեռքից: Այս բո-
լոր տվյալները իմի հավաքելով, սակայանի բժիշկը
աանտեխնոուզների հետ միատին մշակում են կոնկրետ
միջոցառումներ հիվանդության ու տրամադրողմի
պատճառները վերացնելու համար ե ներկայացնում
չտարին: Շատրը դեկադայում մեկ անգամ քննության
ե առնում այդ բոլոր տվյալները ե վճռողական միջոցնե-
րի յե դիմում այդ սաաջարկները յեռանկյունու ու
բանվորական հասարակայնության միջոցով գործնակա-
նում կիրառելու համար, իսկ չարամիտ պարապուրդ
տվողների վերաբերյալ կաղմակերպվում ե հասարակա-
կան դատ, յենթարկելով հասարակական պարսավանքի,
կամ դիրեկիյիսչի առաջ հարց դնում հեռացնելու աշխա-
տանքից, միաժամանակ ստեղծում լայն հասարակական
կարծիք այդ յերևույթների շուրջը: Այստեղ, ինչպես
տեսնում ենք, վճռողական միջին ողակը հանդիսանում ե
Առկայանը, նրա ինքնադործունելությունից, նրա ակ-
տիվությունից, ե կախված հիվանդությունների իջեց-
ման համար տարվող պայքարի հաջողությունները: Առ-
կայանը առաջին հերթին հիվանդությունների հաշ-
վառմանը պետք ե աղղանշանային բնույթ տա, այն-
պես, վոր գործարանի հիվանդության ամենորյա պատ-
կերը լրիվ դրսեվորված լինի, նույն որը:

Մյուս կողմից առկայանը իվիճակի պիտի լինի ող-
տադործելու սոցապալատգամավորներին ե սանպոստե-
րին: Բավական չե անել առաջարկներ գործարանի ե
Սոցկենցադային հիմնարկների հայտնաբերված թերու-
թյունների վերացման վերաբերյալ, հարկավոր ե նաև
ակտիվի միջոցով սահմանել հսկողություն ցեխերում,
սոց. կենցադային հիմնարկներում, այդ առաջարկները
կիրառելու ե կանխարկիչ միջոցների դիմելու, վոր-
պեսզի նորից թերություններ չկրկնվեն: Սոցապալատ-
գամավորներին նպատակահարմար ողտադործելու հա-
մար պետք ե բաժանել նրանց հետևյալ սեկցիաների.—

1. Առողջապահական սեկցիայի, վորը դրադվում է ցեխի ու կենցաղի առողջապահական, արդստ-նիտարիայի ու անվտանգության տեխնիկայի սանմինիստի խնդիրներով:
2. Սոցիալապահպան սեկցիայի, վորը հսկում է մսուրի, մանկապարտեզի, ճաշարանի, խոհանոցի սանդրության, յերեխաների խնամքի, դաստիարակության, սննդի վորակի ու ալ խնդիրներով:
3. Բանկոնարուի սեկցիան, վորը պարբերաբար տանում է հետազոտություն պարապուրդ տվող բանվորների կենցաղային պայմանների, վերջ-նելով ալդպիսիների ցուցակը առկայանից և տարելչիկներից:

Հիվանդությունների ու տրամաատիզմի իջեցման շտաբը իր ամբողջ աշխատանքները պետք է ծավալի, լայն կիրառելով սոցմրցման ու հարվածայնության ալդստուգված սոցիալիստական ձեւը, առաջ բերելով սոցմրցման ալիք ցեխերի մեջ, հիվանդության կոնտրոլ թվերի կատարման համար:

Ցեխի ամեն մի հարվածային բանվոր պատվի գործ պետք է համարի իր ցեխում պայքարել հիվանդության պարապուրդ ուրերի իջեցման համար: Գործարկոմ-տեղկոմները ժամանակին պետք է իջեցնեն ցեխեր հի-վանդության ու տրամայի կոնտրոլ թվերը: Վոչ մի սոցապապատգամավոր, կամ նրա սեկցիաներն ու սան-պոստերը, առ-բջիջները առանց սոցմրցման պայմա-նադրի չպետք է լինեն: Քա՞նի հիվանդի կենցաղային պայմաններ են հետազոտել, քա՞նի սիմուլյանտ են հայտնաբերել, քանի՞սին հասարակական դատի յեն տվել, ինչպե՞ս են պայքարել սանմինիստի կիրառման համար, ցեխում ինչ առաջադրանքներ են արել աշխա-տանքների պայմանների առողջացման համար: Ահա նրանց աշխատանքի ու սոցմրցման ցուցանիշները: «Աշխատավորության առողջացման գործը աշխատա-վորության սեփական գործն է հանդիսանում» ահա խորհրդային բժշկականության լողունդը, վորի լիակա-

տար կենսադարձումը պայմանավորում է բանխորան հասարակացութեան լայն ներդրումով աշխատանքի ու կենդանի առողջացման դորձին և անկասկած կտա լիակատար արդյունք:

Այդպիսով հիվանդութեանների բարձր ցուցանիշների իջեցման համար ծավալվող պայքարի առանցքը կազմում են մերեմում նշված 4 հիմնական դորձոնները, այն է՝


1. Պայքար բանութի հասունութեան դեմ ու աշխատանքի կարգապահութեան համար:
2. Պայքար արտադրական սանխտարիայի ու անվտանգութեան տեխնիկայի բարձր դրվածքի համար:
3. Պայքար բուժ. պրոֆիլակտիկ դորձի մարտի, նրան արտադրութեանը բնդհույ մատենելու համար:
4. Պայքար բանխորութեան սոց. կենդանային հիմնարկներին վերականգնելու ու քանակական ցուցանիշներին համար:


Այդպիսով հիվանդութեանների ու տրավմատիզմի բարձր ցուցանիշների իջեցման համար պայքար ծավալելու անհրաժեշտ նախապայմանը հանդիսանում է. —

1. Բանխորական լայն մատուցների ներդրումը սոցապոպատգամավորներին, սանպոստերին աշխատանքների մեջ:
2. Գործարանային պրոֆ կազմակերպութեանների կոնկրետ, ոպերատիվ, ամենօրյա ղեկավարութեան ապահովումը առ-կայանի, հիվանդութեանների իջեցման շտաբի, սանպոստերի, սոցապոպատգամավորներին աշխատանքներին վրա:
3. Սոցոր ձեռնարկներում գործարկումներին կից հիվանդութեանների իջեցման շտաբի կազմակերպումը:
4. Առկայանների կողմից հիվանդութեանների և տրավմատիզմի ամենօրյա ազդանշանային վեճակագրական տվյալների մշակումը:

5. Վիճակագրական աղբյուրներին տվյալներին հիման վրա, հիմնադուծյուններին և արավմատիզմի պատճառները դրսևվորելու համար, անցկացնել ցեխերում ու բնակավայրերում, աշխատանքի ու կենցաղի պայմաններին, նամանավանդ բանվորական վորոչ խմբակներին բաղմաեղումների կոմպլեկսային հետադոտություն:
6. Մշակել կոնկրետ առաջարկներ անխատանքի ու կենցաղի պայմաններին բնագավառում հայտնաբերված թերությունները վերացնելու համար, ծավալել լայն պայքար սոցմրցման ու հարվածայնության հիման վրա, ալո առաջարկները գործնականում կիրառելու նկատամամբ:

Անցկացնելով վերոհիշյալ բոլոր ձեռնարկումները, պետք է յենթադրել, վոր անշուշտ հիմնադուծյուններին ու արավմատիզմի ցուցանիչներին հետագա ել տվելի իջեցումը տեղի կունենա, և դարկ կտա աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, արդթինպլաններին կատարմանն ու գերակատարմանը, կատեղծի աշխատավորական մատաներին համար կատարելապես առողջ ու կուլտուրական կենցաղ: Այդպիսով մենք կատարած կինենք մեր մեծ առաջնորդի պատմական 6 ցուցմունքները:





ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0002622

ԳԻՆԸ ԵՐ ԿՈՊ.

A π
24064

204.

Դ-ր Ա. Խարմաշարյան
Բолесни и травматизм на производстве и конкретни
мероприятия по их снижению
Издательство СПС Арменин, Эривань, 1934 г.